ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 9

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 12-րդ հոդվածի պահանջով.

Ավագանին որոշում է.

Հաստատել Նորաբաց համայնքի ավագանու թիվ 2 նիստի հետևյալ օրակարգը:

1.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ /ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ/ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԳԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

4.ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

5.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ

7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՉԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 10

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ /ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ/ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 18-մայիսի 2006թվականի թիվ 912-ի որոշման 3.1 կետի 3-ենթակետի, Նորաբաց համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշում է.

Նորաբաց համայնքի Կենտրոնական փող. թիվ 1/1 հասցեում գտնվող Սուրբ Աստվածածին Եկեղեցին նախնական պայմանագրով նվիրաբերել Հայաստանյաց Առաքելական սուրբ եկեղեցուն /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ օրինականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՁԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 11-Ն

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրաաետության օրենք 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով.

Ավագանին որոշում է.

Վարչական բյուջեի եկամուտներ պակասեցնել 100.0հազ.դրամ,նույն թվում՝

տեղական տուրքեր պակասեցնել 100.0հազ.դրամ

Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն:

11.1.2պահուստային միջոցներ «2842.1» փոխարինել «2592.1»թվով
4891պահուստային միջոցներ պակասեցնել 250.0հազ.դրամ

01.6.1Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն «785.0»փոխարինել «935.0»թվով
4211Բանկային ծառայություն ավելացնել 150.0հազ.դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 12-Ն

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԳԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի, ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

Ավագանին որոշում է.

1.Նորաբաց համայնքում քաղ. Վարդգես Գրիգորյանի սեփականություն հանդիսացող կադաստրային 0052-0036 ծածկագրի տակ հաշվառված 0.31627հա գյուղատնտեսական նշանակության վարելահողից՝ 0.04472հա և 0052-0037 ծածկագրի տակ հաշվառված 0.9992հ գյուղատնտեսական արտադրական նշանակության հողամասերի /համաձայն հատակագծերի/ նպատակային նշանակությունները փոփոխել և դասել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.Պարտավորեցնել նպատակային նշանակությունը փոփոխող հողամասի սեփականատեր Վարդգես Գրիգորյանին օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունը:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 13-Ն

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3հոդվածի, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

Ավագանին որոշում է.

1.Նորաբաց համայնքում քաղ. Արտուրիկ Գրիգորյանի սեփականություն հանդիսացող կադաստրային 0052-0040 ծածկագրի տակ հաշվառված 0.08հա գյուղատնտեսական նշանակության հողամասի / համաձայն հատակագծի/ նպատակային նշանակությունը փոփոխել և դասել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.Պարտավորեցնել նպատակային նշանակությունը փոփոխող հողամասի սեփականատեր Արտուրիկ Գրիգորյանին օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել հողամասերի կադաստրային արժեքի տարբերությունը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆՆԵՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 14-Ն

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀՀ ՕՐԵՍԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 25.01.2017թ-ի թիվ 1/2/14/1/318-17 գրությունը.

Ավագանին որոշում է.

Նորաբաց համայնքի ավագանու 13.01.2017թվականի թիվ 4-Ն որոշումը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ;

1.Նորաբաց համայնքում 2017թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների ո, հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ բացառությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա/Մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում /այգեգործական/ ամառանոցային տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեց հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝տասնհինգ հազար դրամ.

բ/սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝երեսուն հազար դրամ.
--501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների

համար՝ հիսուն հազար դրամ.
-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ.Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝երեք հազար դրամ
-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2/Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,ուժեղացման, վերականգման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման,վերականգման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ի կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3/Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝հինգ հազար դրամ.

4/Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝երկու հարյուր հազար դրամ.

5/Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ վաթսուն հազար դրամ.

6/Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվ համար՝ հիսուն հազար դրամ.

7/Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտա դրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսակի համար

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ.

-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տաս հազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ

-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ.
-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.
-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քառասունհինգ հազար դրամ.

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսակի համար

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ.
-26-ից ինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ.
-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ.
-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհիմգ հազար մեկ դրամ.
-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

8/իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական վարչական «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9/համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղեր և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար

10/համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար մինչև հինգ հազար մեկ դրամ.
-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝տաս հազար մեկ դրամ.
-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ.
-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամ.
-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամ.

բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝
-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար մինչև հազար մեկ դրամ.
-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝երկու հազար մեկ դրամ.
-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամ.
-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամ
-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մոկ դրամ.

11/ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ

բ.թունդ ալկահոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ.սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.
դ.այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.
ե.դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլարտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ը՝երեք հարյուր յոթանասուն հինգ դրամ.
զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր

12/Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործնթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13/համայնքի տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ.

14/համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

2.սույն հոդվածով սահմանված դրույքաչափերին համայնքի ավագանու որոշմամբ կիրառել 0.5գործակիցը:

3.Հայաստանի Հանրապետության Նորաբաց համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1/համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

2/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո և շինությունների /այդ թվում դրանց վերակառուցումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտը փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

3/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ տասս հազար դրամ.

4/Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնել և վարձակալության տրամադրելու դեպքում, փաստաթղթերի փաթեթի նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար դրամ.

5/համայնքի կողմից մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հազար դրամ.

6/համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ չորս հազար դրամ.

8/համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝

ա.յուրաքանչյուր բնակչի համար՝ տաս դրամ.

բ.սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար՝ երկու հարյուր դրամ.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՁԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ